

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N 107/10**

**Քաղ. Երևան**

**28 ապրիլի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա.Բ.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. ապրիլի 28-ի նիստում (արձանագրություն N79/4) քննարկեց «PATCHI S.A.L.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. մարտի 22-ի «Patchi» (N 12496) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը:

Բողոքում ներկայացված է, որ «PATCHI S.A.L.» հայտնի ընկերությունը, սկսելով իր գործունեությունը 1974 թվականից հենց «PATCHI S.A.L.» ֆիրմային անվանման տակ, երկար տարիներ աշխարհի տարբեր երկրներում արտադրում և վաճառում է բարձրորակ քաղցրավենիք, ինչի շնորհիվ իր «Patchi» ապրանքային նշանով մակնշված արտադրանքը վաճառվում է շուրջ 28 երկրներում, ունենալով բարձր որակ և յուրահատկություն, ինչպես նաև նվաճելով ողջ աշխարհի սպառողների մոտ մեծ համբավ (տես [www.patchi.com](http://www.patchi.com), [www.patchi-industrial.com](http://www.patchi-industrial.com), [www.patchi.us](http://www.patchi.us) կայքերը):

Բողոքում նշված է, որ «PATCHI S.A.L.» ընկերության կողմից «Patchi» ապրանքային նշանով մակնշված ապրանքները լայն գովազդվում են աշխարհով մեկ, մասնավորապես, ինտերնետի միջոցով (տես [www.patchi.com](http://www.patchi.com) կայքը): «PATCHI S.A.L.» ընկերությունը հանդիսանում է «Patchi» ապրանքային նշանի բազում գրանցումների սեփականատերն աշխարհի շատ երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Հորդանանը, Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը, Թուրքիան, ԱՄՆ-ն և այլն (65 երկրներում): Նշված է նաև, որ նպատակ ունենալով մտնել նաև հայկական շուկա, «PATCHI S.A.L.» ընկերությունը նախ և առաջ ցանկանում է, որ իր «Patchi» ապրանքային նշանը ստանա իրավական պաշտպանություն Հայաստանում և այդ պատճառով 2007թ. սեպտեմբերի 05-ին (N20070991) հայտ է ներկայացրել ՀՀ Մտավոր սեփականության գործակալություն

ապրանքային նշանը ՀՀ-ում գրանցելու համար ԱԾՄԴ-ի 21, 30, 43 դասերի ապրանքների և ծառայությունների համար: Սակայն Գործակալությունն այդ նշանը գրանցել է միայն 21 և 43 դասերի ապրանքների և ծառայությունների համար, մերժելով գրանցումն 30-րդ դաս ապրանքների համար ավելի վաղ առաջնություն ունեցող (մոտ երեք ամիս առաջ) հայկական «Պաստիչերիա քեյք» ընկերությանը պատկանող «Patchi» ապրանքային նշանի N 12496 գրանցման առկայության պատճառով:

Բողոքում նշված է, որ «Պաստիչերիա քեյք» ընկերությունը չի արտադրում և «PATCHI S.A.L.» ընկերության կողմից չունի թույլտվություն կամ լիազորություն վաճառել իր ապրանքները Հայաստանում, առավել ևս չունի թույլտվություն գրանցել «Patchi» ապրանքային նշանը սեփական անունով, մանավանդ, որ այն համընկնում է ֆիրմային անվանման հետ: «PATCHI S.A.L.» ընկերությունը գտնում է, որ «Պաստիչերիա քեյք» ընկերությունը ապօրինի գրանցելով ուրիշին պատկանող «Patchi» ապրանքային նշանը և ֆիրմային անվանումը իր անունով, կոպտորեն խախտել է Փարիզյան Կոնվենցիայով հռչակված բարեխղճության, ազնվության, անաչառության, արդարության սկզբունքները, ինչպես նաև օրենսդրության նորմերը, կատարելով անբարեխիղճ մրցակցության գործողություն, ինչը համաձայն օրենսդրությանը և միջազգային նորմերի պետք է վերացվի:

«PATCHI S.A.L.» ընկերությունը գտնում է, որ «Պաստիչերիա քեյք» ընկերությունը խախտել է ՀՀ Սահմանադրության, Միջազգային Պայմանագրերի եւ Օրենքի ստորև բերված նորմերով ամրագրված «PATCHI S.A.L.» ընկերության իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես, խոչընդոտվում է «PATCHI S.A.L.» ընկերության «Patchi» ապրանքային նշանի օգտագործմամբ ազատ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացումը դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ: Այդ նորմերը հետևյալն են.

Փարիզյան Կոնվենցիայի (Հայաստանի նկատմամբ գործում է 1991թ. դեկտեմբերի 25-ից) 10bis հոդված, Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 11-րդ, 12-րդ, 14(1), 15-րդ հոդվածներով:

Գրանցելով «Patchi» ապրանքային նշանը իր անունով «Պաստիչերիա քեյք» ընկերությունը խախտել է վերոհիշյալ օրենսդրական նորմերը և ցուցաբերել է անբարեխիղճ մրցակցության վարքագիծ, ինչը արգելվում է:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության Բողոքարկման խորհրդի կանոնադրության 2,4(1,2), 5(2) կետերով և Բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման Կարգի 2 (12) կետով ամրագրված նորմերից և իրավունքներից, բողոքարկողը

խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից գրանցված N 12496 «Patchi» ապրանքային նշանի գրանցումը:

«Պաստիչերիա քեյթ» ընկերության կողմից 23.04.2010թ. ստացվել է առարկություն, որտեղ նշված է, որ անբարեխիղճ մրցակցության վարքագծի առկայության հարցի որոշումը ՀՀ մտավոր սեփականության գործակալության կամ դրա բողոքարկման խորհրդի իրավասությունների մեջ չեն մտնում:

Գրության մեջ նշված է նաև, որ ՀՀ Սահմանադրության համաձայն պետական մարմիններն իրավունք ունեն կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով: «Ապրանքային եւ սպասարկման նշանների եւ ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը կամ դրա հիման վրա ընդունված Բողոքարկման խորհրդի կանոնադրությունը եւ Բողոքարկման խորհրդում հարցերի քննարկման կարգը, իրավասություն չեն տալիս Գործակալությանը կամ դրա Բողոքարկման խորհրդին քննարկել անբարեխիղճ մրցակցության վարքագծի առկայության կամ բացակայության խնդիրը: Ավելին, այն իրավասությունները, որոնցով նշված ակտերի համաձայն օժտված են Գործակալությունը կամ Բողոքարկման խորհուրդը, տեսականորեն կամ գործնականորեն հնարավորություն չեն տալիս քննել ու եզրահանգումներ անել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված անբարեխիղճ մրցակցության վարքագծի առկայության համար անհրաժեշտ տարրերի վերաբերյալ: Բացի դրանից, նույն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը անբարեխիղճ մրցակցության խնդիրների քննարկման ու լուծման համար լիազոր մարմին է սահմանում ՀՀ Տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովին:

«Պաստիչերիա քեյթ» ընկերությունը՝ ի պատասխանան բողոքի, պնդում է, որ բողոքարկողի փաստարկներն ունեն միայն հայտարարությունների տեքստ, ավելին, բողոքարկողը վկայակոչել է իրավական նորմեր, որոնք կամ սույն դեպքի համար կիրառելի չեն, կամ չեն կարող քննվել Մտավոր սեփականության գործակալության Բողոքարկման խորհրդում եւ խնդրել է մերժել բողոքը ամբողջությամբ:

Կոլեգիան մանրամասնորեն քննարկելով ներկայացված նյութերը, հաշվի է առել հետևյալ հանգամանքները՝

- «PATCHI S.A.L.» ընկերությունը ստեղծվել է գործում է 1974 թվականից Լիբանանի մայրաքաղաքում.

- «Forbes» ամսագրի 2006թ. տվյալների համաձայն «Patchi» ապրանքային նշանը Միջին արեւելքում մտել է 15 լավագույն ապրանքային նշանների ցանկում.

- «Patchi» ապրանքային նշանը գրանցվել է մոտ 30 երկրներում.

եւ գտնում է, որ «Patchi» ապրանքային նշանը գրանցվել է մի ընկերության անունով, որը զբաղվում է նույնատիպ ապրանքների արտադրությամբ, եւ չի հանդիսանում «PATCHI S.A.L.» ընկերության ներկայացուցիչն իր արտադրանքը ՀՀ-ում իրացնելու համար, հետեւաբար՝ լինելով թիվ 12496 «Patchi» ապրանքային նշանի իրավատեր կարող է խոչնդոտել այդ արտադրանքի ներմուծմանը ՀՀ տարածք: Իսկ իր բուն արտադրանքով սպառողների մոտ շփոթություն առաջացնել «PATCHI S.A.L.» ընկերության, իր արտադրանքի կամ նրա արտադրական կամ առեւտրային գործունեության հարցում, ինչը հակասում է Փարիզյան Կոնվենցիայի 10<sup>bis</sup> հոդվածի դրույթներին: Կոլեզիան գտնում է, որ խախտվել են նաեւ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի ա) ենթակետի դրույթները, համաձայն որի՝

Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել նաեւ այն նշանները, որոնք՝

ա) հակասում են հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին կամ անբարեխիղճ մրցակցության կանխման կանոններին (գործարար շրջանառության սովորույթներին):

Բողոքարկման խորհրդի նիստում Պրն. Ա. Տոնիկյանը նշեց նաեւ այն մասին, որ «Պաստիչերիա Քեյք» ընկերությունը գտնում է, որ խորհուրդը իրավասու չէ քննարկելու այս բողոքը, սակայն Փարիզյան Կոնվենցիայի 10<sup>ter</sup> հոդվածում նշված է, որ այսպիսի հարցերը կարող են քննարկվել ինչպես դատական, այնպես էլ վարչական մարմիններում, իսկ ՀՀ ում ապրանքային նշանների գրանցումներն անվավեր ճանաչելու իրավասություն ունեցող վարչական մարմինը ՀՀ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդն է:

Հարկ ենք համարում նշել նաեւ, որ «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, նույնպես, սահմանում է, որ ապրանքային նշանների գրանցումներն անվավեր ճանաչելու մասին բողոքները քննարկում են Բողոքարկման խորհրդի նիստում: Հետեւաբար, «Պաստիչերիա Քեյք» ընկերության «Patchi» (N 12496) բողոքը չի կարող քննարկվել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական Հանձնաժողովի կողմից, քանի որ

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

2. Սույն օրենքը չի տարածվում մտավոր սեփականության իրավունքներին առնչվող հարաբերությունների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ իրավունքներն օգտագործվում են մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման նպատակով:

Հիմք ընդունելով ներկայացված ապացույցները, ընդահուր քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը պարզեց, որ այս դեպքում առկա են կոլեգիայի կողմից պարզված հանգամանքները եւ կիրառելի է Փարիզյան Կոնվենցիայի 10<sup>bis</sup> հոդվածի դրույթները, ինչպես նաեւ գործում է Օրենքի 28-րդ հոդվածի 1 մասի «ա» ենթակետը, համաձայն որի, ապրանքային նշանը կարող է վիճարկվել եւ ճանաչվել անվավեր ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից եւ առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

### Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «PATCHI S.A.L.» ընկերության բողոքը եւ «Patchi» (գրանցման համար՝ 12496) բառային ապրանքային նշանի գրանցումն ամբողջովին անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա.Ազիզյան